



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

№ ԱԽ-2-Ե-1  
2017թ.

**Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՍԱՐ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ  
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝**

*նախագահությամբ՝*

*Ա. Սկրտումյանի*

*մասնակցությամբ ԱԽ անդամներ՝*

*Ա. Բաբայանի, Գ. Բաղիրյանի,  
Ռ. Բարսեղյանի, Ա. Դարբինյանի,  
Գ. Խանդանյանի, Ա. Խաչատրյանի,  
Մ. Հարթենյանի, Գ. Ղազինյանի,  
Ս. Չիչոյանի, Ե. Սողոմոնյանի,  
Վ. Ստեփանյանի, Հ. Փանոսյանի,  
Ս. Օհանյանի*

*քարտուղարությամբ՝*

*Շ. Վարդանյանի*

2017 թվականի փետրվարի 14-ին քաղաք Երևանում՝ դռնփակ նիստում, քննարկելով Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի դատավորի թափուր պաշտոնը համալրելու համար վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար ծառայողական առաջխաղացման ցուցակի քրեական մասնագիտացման բաժնում ընդգրկված անձանց թեկնածությունները և ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 144-րդ հոդվածով և 111-րդ հոդվածի 1-ին մասով,

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Հավանություն տալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավորի պաշտոնում նշանակելու համար Նարինե Ռուդիկի Հովակիմյանի թեկնածությանը:
2. Նարինե Ռուդիկի Հովակիմյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավորի պաշտոնում նշանակելու համար՝ դադարեցնելով նրա՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավորի լիազորությունները:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**